ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<10 >> <<մարտ>> 2016 թ N 22

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Ջերմուկի Մ.Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2016 թվականի մարտի 3-ի գրությունը և Լուսիկ Սարգսյանի հետ կնքած 2014 թվականի նոյեմբերի 24-ի N274 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2016 թվականի մարտի 10-ից Լուսիկ Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Ջերմուկի Մ.Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր 5 (հինգ) տարի ժամկետով:
2. 2016 թվականի մարտի 10-ից լուծել Լուսիկ Սարգսյանի հետ կնքած 2014 թվականի նոյեմբերի 24-ի N274 աշխատանքային պայմանագիրը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ